ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

<<ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ>> ՓԲԸ 16.03.2018թ. ԹԻՎ 231-Ա ՀՐԱՄԱՆՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

Հայաէրոնավիգացիա ՓԲԸ
(ք. Երևան 0042, Ի. Գասպարյան 33)

29 մարտի 2018
ժամը 11:00

Հանձնաժողովի նախագահ

Արթուր Ալավերդյան Նավիգացիայի ծառայության պետ

Հանձնաժողովի գնահատող անդամներ

Աշոտ Կարախանյան Նավիգացիայի ծառայության աէրոդրոմային նավիգացիոն կենտրոնի ղեկավար

Ալլիտա Մաջարյան Նավիգացիայի ծառայության ինժեներ

Հանձնաժողովի բացող անդամներ

Արթուր Սայադյան Նավիգացիայի ծառայության աէրոդրոմային նավիգացիոն կենտրոնի ինժեներ

Գարեգին Սարգսյան Նավիգացիայի ծառայության աէրոդրոմային նավիգացիոն կենտրոնի ինժեներ

Հանձնաժողովի քարտուղար

Ա. Կարապետյան

ՕՐԱԿԱՐԳ

1. <<ՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-04/18>> ծածկագրով հայտերի բացում և գնահատում՝ հրավերով սահմանված կարգով:
2.Հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշում և հայտարարում :

Հրապարակվեց հայտ ներկայացրած մասնակիցների անվանումը՝

1. <<Ռադար-Ավիա>> ՓԲԸ
2. <<Ռեդինետ>> ՓԲԸ

Հանձնաժողովի նախագահ Ա. Ալավերդյանը հայտարարեց սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք աշխատանքների գինը՝ մեկ թվով արտահայտված, ինչպես նաև հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված, հիմք ընդունելով տառերով գրվածը:

Չափ. հ/հ	Անվանում	<<Ռադար-Ավիա>> ՓԲԸ	<<Ռեդինետ>> ՓԲԸ	Նախահ. Գին ՀՀ դրամ
1	*Սարքավորումների մոնտաժման և տեղադրման աշխատանքներ*	4 850 000	3 900 000	5 000 000

1. <<Ռադար-Ավիա>> ՓԲԸ- ԱԱՀ վճարող չի հանդիսանում:

Հանձնաժողովը արձանագրեց, որ <<Ռեդինետ>> ՓԲԸ կողմից ներկայացված հայտում առկա էին անհամապատասխանություններ՝ հայտում առկա չէր սույն ընթացակարգի հրավերի 4.3 կետով նախատեսված լիցենզիաների(ներդիրներ) պատճենները:

Համաձայն սույն ընթացակարգի հրավերի 7.9 կետի (Եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ գնային առաջարկը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը)

Հանձնաժողովը որոշեց

1. Կասեցնել մեկ աշխատանքային օրով հանձնաժողովի աշխատանքը և մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը
2. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ոչ ուշ քան 03.04.2018թ. ժամը 11.00 <<Հայաէրոնավիգացիա>> ՓԲ ընկերությունում:

Ա. Ալավերդյան	**Հանձնաժողովի նախագահ**
Ա. Կարախանյան	**Հանձնաժողովի անդամ**
Ա. Մաջարյան	**Հանձնաժողովի անդամ**
Ա. Սայադյան	**Հանձնաժողովի անդամ**
Գ. Սարգսյան	**Հանձնաժողովի անդամ**
Ա. Կարապետյան	**Հանձնաժողովի քարտուղար**